

ՍՏՈՒԳԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մ. ԱՂԱԲԵԿՅԱՆ

Տաճու

Հայտնի է, որ *dǝm- «տուն» արմատը հնդեվրոպական մի քանի լեզուներում վկայված է նաև -u- հիմքով՝ կատիներենում և հին սլավոներենում -u- հիմքը առկա է ինքնուրույն բառաձևերում՝ լատին. *domus*, -ūs, հին սլավ. *domъ* «տուն»։ Մյուս լեզուների համար ստուգաբանական բառարաններում բերվում են օրինակներ, որտեղ -u- հիմքով ձևը հանդես է գալիս որպես բարդ բառի բաղադրիչ՝ հին հնդկ. *dāmā-nas-* «տան ընկեր», լիտվ. *namū-darys* «տան կառուցող, շինարար»։ Հայերենի համար նույնպես նշվում է մեկ բարդ բառ՝ տանուտէր՝, որ «Հայկազյան բառարանում» բացատրված է. «1 գլուխ ընտանեաց և գերդաստանի, 2 ցեղապետ, ազգապետ, նահապետ»¹։

Լեզվաբանները սովորաբար նշում են, որ *dǝm- արմատի -u- -ով ձևերում պահպանվել է հնդեվրոպական *-u- նախնական հիմքը՝ առանց ստուգաբանական բացատրությունների։ Բայց Մ. Բրեալը, ինչպես Ա. Մեյեն է վկայում, աշխատել է գտնել դրա ծագման աղբյուրը։ Տաճուտէր բառի առիթով Մեյեն գրում է. «*domu- բունը, որ վկայված է լատին. *domus*, հին սլավ. *domŭ*, սանսկր. *damūnas* բառերով, պր. Բրեալի կողմից վերջերս հայտնաբերվել է ծագում (որը -δου -ով բուն է, ինչպես πάτριος -ը, տե՛ս սույն Mémoires, է, էջ 448)։ Հայերենը ևս ունի նրա մի հետքը. տանուտէր բառում սկզբնական *տամոյ-տէր-ում տանու-ն *dom-/ouS սեռականի ներկայացուցիչն է։ Տուն, սեռ. տան ձևի ազդեցությամբ -մ- ընթացիկը դարձել է նա՞ն»²։

Մենք հնարավորություն չենք ունեցել ծանոթանալու Մ. Բրեալի հիշյալ հոդվածին, բայց ասվածից կարելի է եզրակացնել, որ նա *domu- ձևը համարում է հնդեվրոպական *-du/-u հերթագայությամբ սեռական հոլովի հիմք։

Ա. Մեյեն վերը նշված ստուգաբանությունը հնարավոր է համարում, որովհետև հնդեվրոպական *ou երկբարբառը հայերենում տալիս է ոչ, իսկ վերջինս շեշտից զրկվելով դառնում է ու։ Թեպետ բացատրված չէ տանու- ձևում ա հնչյունի առկայությունը, բայց հասկացվում է, որ այն նույնպես համարվում է սեռ. տան ձևի ազդեցություն, քանի որ *o> ա անցումը հայերենի համար օրինաչափ չէ։

Պարզ չէ, թե ինչու Ա. Մեյեն հայերենի ձևի համար չի կանխադրում հերթագայված հենց *-u- հիմքով նախաձև կատիներենի ստուգաբանական բառարանում նույնպես տանու- ձևը անմիջապես չի բխեցվում *-u- հիմքով հնդեվրոպական նախաձևից. «տանուտէր-ում կա *domu-ի անուղղակի հետք՝ տուն, տան-ով համակցված (*combiné*)»³։

2. Աճառյանը, որոշ շահով հենվելով Մեյեի ստուգաբանության վրա, այնուամենայնիվ

¹ S. J. Pokorny, Indogermanisches etymologisches Wörterbuch, Bern und München, 1965, A. Ernout et A. Meillet, Dictionnaire étymologique de la langue latine, Paris, 1932, М. Фасмер, Этимологический словарь русского языка, т. I, Москва, 1964.

² Նոր բաղադրիչը հայկազեան լեզուի, Վենետիկ, հտ. 2, 1837, էջ 843։

³ Անտուան Մեյե, Հայագիտական ուսումնասիրություններ, Եր., 1978, էջ 188։

⁴ A. Ernout et A. Meillet, Dictionnaire étymologique de la langue latine, p. 271.

գտնում է, որ տանուա՛ր բառում պահպանվել է հնդեվրոպական *domu- նախածը, քակայն հայերենում *o>ա հնչյունափոխությունը չի բացատրում⁵։

Հայերեն տանու- ձևը կարող էր գալ նաև *-ouj⁶-u- հերթագայվող թեթևած հիմքի *-u- տարբերակով նախածից (հմտ. հին սլավ. domъ և այլն)։ Հայերենը ժառանգել է հնդեվրոպական *dōm- արմատի երկար ձայնավորով տարբերակը՝ *dōm- > տան, որը թեթևալիս պետք է ունենար թույլ ձայնավորում՝ *dēm- (հմտ. հուն. δῆμος), քանի որ աթեմատիկ հիմքի շեշտը թեթև ձևերում արմատից տեղափոխվում էր վերջավորության վրա⁶, որի հետևանքով արմատի անշեշտ ձայնավորը հաճախ թուլանում էր։

Տվյալ դեպքում եղել են *dēmou- և *dēmou- թեթևած հիմքեր, որոնք հայերենում բնականորեն կրառնային *տամոյ- և *տամու- Ուրեմն հայերեն տանու- բաղադրիչի -ա- ձայնավորը ծագում է հնդեվրոպական նախածից։ Ինչ վերաբերում է մ>ն հնչյունափոխությանը, ապա այն ոչ թե սեռականի մեկ այլ՝ տան ձևի ազդեցություն է, ինչպես ենթադրում է Ա. Միսին, այլ կարծում ենք, արմատի միասնականացման կամ բառի հարացույցի կարգավորման օրենքով բառի ուղիղ և թեթև հիմքերի արմատի տարբերակները միմյանց նմանվելու ձգտման արդյունք⁷, մասնավանդ որ ու/ա հերթագայությամբ այդ տարբերակներն իրարից արդեն բավական հեռանում էին։

Տանու- հիմքով բարդ բառեր են պահպանվել նաև հայերեն բարբառներում՝ տանուցտանու, տանետանու (Եր.), տանեցտանու (Քր.) «առտնին կերպով, ընտանեբար» (տանեցտանու նշանել են)⁸։ Տանուցտանու և տանետանու բառերը զուգաձևեր են։ Երկրորդում անշեշտ ու-ն ընկել է, և ց-ն տ-ի մոտ դարձել է ս, քանի որ բարբառներում կրառնականները խուլ պայթյալայինների մոտ անեմանությունը հաճախ դառնում են շփականներ (հմտ. խցկել—խսկել, կռկկել—կոռկել, իմաց տալ—իմաս տալ, փուլ—տուլուլ—փուլ—տուլուլ)։

Երևանի (Արարատյան) և Քրիլիսիի բարբառներում տան բառը ու հոլովման չի պատկանում և լուսի -ա- հիմքով հոլովային զուգաձևեր։ Ուրեմն ինչպես բացատրել տանու- հիմքը։

Բարդության տանուց- բաղադրիչին Քրիլիսիի տարբերակում համապատասխանում է տանեց- ձևը, որը խոսվածքի արդի համակարգում բացատրելի չէ։ Սալաթ-Նովայի ստեղծագործություններում, որտեղ այս կամ այն լատիվ արտացոլված է Քրիլիսիի խոսվածքի XVIII դարի առաջին կեսի վիճակը, թեպետ չկա տանեց ձևը, սակայն -նմեն վերջավորության կողքին, որ հետագայում բացառական հոլովի համար ընդհանրացել է, հաճախ ենք հանդիպում տանե ձևին (տանե դառ առած), այսինքն՝ գրաբարած բացառականի՝ ի տանեմ, Հնարավոր է, որ եզակի թվի տանե-ի համարանությունը հոգնակի թվի գրաբարյան տանց ձևը դարձել է տանեց, որ Սալաթ-Նովայի ստեղծագործություններում վկայված չէ, քանի որ այդ բառի հոգնակի բացառականը հեղինակի կողմից չի գործածվել։

Պետք է ենթադրել, որ տանուց- բաղադրիչը նույնպես հոգնակի սեռական-տրական-բացառականի ձև է, Տանուցտանու բարդությունն ավելի հավանական է դարձնում տանու հիմքի հնդեվրոպական սեռականի *dēmou- տարբերակից ծագելու վարկածը։ Ըստ Մեյսիի ստուգաբանության այս բառը պետք է ունենար *տանուցտանու ձև, որից տանուցտանու բիծեցնելը դժվար է։

Տանուցտանու բարդության բաղադրիչները տրոհելի միավորներ են եղել, որոնց կապի ձևը լեզվի զարգացման ընթացքում երկար ժամանակ գիտակցվել է։ Այդ պատճառով Քրիլիսիի խոսվածքում բարդության առաջին բաղադրիչը փոխվել է, որովհետև տան բառի հոլովային հարացույցի համապատասխան անդամը նույնպես փոխվել է (տանեց)։ Մինչդեռ արարատյան բարբառում այդ բարդության բաղադրիչների հոլովային հարաբերությունը մթազնվել է, որի հետևանքով բարդությունը նույնությունը պահպանվել է՝ տանուցտանու։

Եթե հայերենում տանու հիմքով կազմվել են բարդ բառեր, ուրեմն այդ ձևը բավական գործածական է եղել։ Ընդ որում տանուից բարդության մեջ այն, ըստ Մ. Բրեյսի և Ա. Մեյսիի, հնդեվրոպական սեռականի ժառանգորդն է, որի իմաստը այդ բառում ըմբռնվում է Հետևաբար հայերենում ունեցել ենք տան բառի սեռական տանու (ըստ Ա. Մեյսիի՝ *տամոյ) ձև։ Այդ դեպքում ինչու՞ պետք է լիներ նաև տան ձևը, որի ծագումը համարվում է ոչ լրիվ պարզված։ Գ. Բ.

⁵ Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, Եր., 1979, էջ 428։

⁶ Տե՛ս А. Мейе, Введение в сравнительное изучение индоевропейских языков, Москва-Ленинград, 1938, էջ 322, Գ. Զանուկյան, Հայերենի հոլովական սիստեմը և նրա ծագումը, Եր., 1959, էջ 151։

⁷ Տե՛ս В. Георгиев, Исследования по сравнительно-историческому языкознанию, Москва, 1958, էջ 41։

⁸ Հր. Աճառյան, Հայերեն զավառական բառարան, Թիֆլիս, 1913, էջ 1013. այնուհետև բարբառային ձևերը բերվելու են ըստ նշված բառարանի՝ առանց համապատասխան հղումների։

⁹ Սալաթ-Նովա, Հայերեն, վրացերեն և ադրբեջաներեն խաղերի ժողովածու, Եր., 1959։

Ջահուկյանը, օրինակ՝ տուն բառի սեռական-տրական-բացառական հոլովների արմատի և ձայնավորի առկայությունը, ինչպես և շուն բառի դեպքում, համարում է գործիականի ա-ի ընդհանրացման արդյունք, «եթե միայն ենթադրենք հնդեվրոպական Մ-ով հիմք և արմատական ձայնավորի՝ օ (զրո հերթապայություն, որով *d̥m̥bhi > տամբ. այլապես այստեղ պետք է լինի համեմատվող բառերի (իմա՝ տուն և շուն— Մ. Ա.) հոլովման անալոգիան կամ, թերևս, իրանական ազդեցություն»¹⁰:

Գուցե ավելի ճիշտ կլինի ենթադրել, որ *d̥m- նախածքը, ունենալով *ou-ի-ն հիմքով հոլովում, հայերենում պատկանել է ձայնավորահանգ հոլովման, իսկ թեք հոլովների արմատի և ձայնավորը, ինչպես ասացինք, Օ՛ի՞՞ հերթապայության արդյունք է, այսինքն՝ նախնական և Ուտումնասիրությունները ցույց են տվել, որ նախապատմական շրջանում հայերենի շեշտը աստիճանաբար կայունացել է վերջընթեր վանկի վրա՝ դառնալով հիմնական օրենքի՝ 2 նտեաբար տաճու բառի շեշտը նույնպես կարող էր տեղափոխվել վերջից երկրորդ վանկի վրա՝ տաճու, մանավանդ որ այն տվյալ դեպքում ձևաբանական դեր չէր կատարում, քանի որ ուղիղ և թեք հոլովածների միջև տարբերությունն ակնհայտ էր: Հետագայում ենթարկվելով բառավերջի շեշտազուրկ վանկի ձայնավորի անկման օրենքին, այն դարձել է տան: Այս հանգամանքն էլ պատճառ է դարձել տան բառի հոլովալիս հարացույցի փոփոխության՝ ձայնավորահանգից դարձել է ձայնորդահանգ:

Հայերենում գոյություն ունի նաև տաճու ինքնուրույն բառը, որ չկա Հ. Աճառյանի «ձայերենի արմատական» և «Գավառական», ինչպես նաև «Հայկազյան» բառարաններում, որի պատճառով, հավանաբար, այն հետազոտողների ուշադրությունից դուրս է մնացել: Բայց տաճու-ն հայերեն բարբառներում լայն տարածում ունեցող սծականի արժեքով բառ է Այն իր բազմաթիվ նշանակություններով գործածական է նաև գրական հայերենում. «1 տան, տանեցի, ընտանիքին պատկանող. 2 տնայնագործական եղանակով պատրաստված. 3 ընտանեկան հարկի տակ ապրող. 4 լավ պահված՝ խնամված, տնասուն. 5 տվյալ ընտանիքին շատ մոտ կանգնած, ընտանիքի հետ սերտ կապերով կապված, մտերիմ. 6 ընտանի. 7 տան, տնային»¹²:

Ածականակերտ —ալ ածանցը հայերենում գործավել է, հավանաբար, նախապատմական շրջանից ի վեր, ինչպես. այր—արու, կիծ—կծու, հատ—հատու, աղ—աղու, վայր—վերու (վերջինս բարբառային է): Հնարավոր է, որ այժմ տարածված այս տիպի ածականների մեծ մասը կազմվել են հայերենի պատմական շրջանում: Սակայն —ալ ածականակերտ ածանցը, ամենայն հավանականությամբ, սկիզբ է առնում հնդեվրոպական լեզվաընդհանրության շրջանից: Ընդհանրական նախալեզվում *u ածանցով «կազմվում էին բազմաթիվ ածականներ, որոնց շեշտն ընկնում էր ածանցի վրա. արմատը սովորաբար ունենում էր զրո աստիճանի ձայնդարձ, այսպես՝ սնակը. gur-ú-ն «ծանր», հուն. γαρ-ú-ς, գոթ. kaur-ú-s, լատին. grauis (*gwr-w-is-ից), սնակը. ts-ú-ն «ծարավից պապակված», գոթ. þáurs-u-s «շոր», հուն. θάδ-ú-ς «խոր», βένθοσ-ի «խորություն» կողքին» և այլն¹³:

Տաճու ձևը պատմական շրջանում չի կազմվել, որովհետև —ալ ածանցն ավելանում է բառարմատի և ոչ թեքված հիմքի վրա (հմտ. այր—արու, սեռ. առն): Իսկ տաճ-ը ինքնուրույն բառարմատ չէ, այլ՝ պատմական ամենավաղ ժամանակներից հայերենի ձևաբանական մակարդակի միավոր, այսինքն՝ թեք հոլովածն Ուրեմն տաճու ձևը նախապատմական շրջանից է գտնիս: Այդ դեպքում չի ժխտվում, որ այն ունեցել է հնդեվրոպական նախածն:

Ինչպես նշվեց, *u ածանցով ածականների արմատը սովորաբար ունենում էր ստորին աստիճանի ձայնդարձ, իսկ շեշտն ընկնում էր ածանցի վրա: Հետևաբար *d̥m-ից *u -ով կազմված ածականը պետք է լինի *d̥m̥u-, որը հայերենում կդառնար *տամա: Երկատված արմատի միասնականացման օրենքով տուն արմատից շատ չհեռանալու ձգտումով *տամա ձևում կարող էր *d̥>ն, իսկ վանկարար *u-ն հայերենում պահպանվում է, այլապես կունենայինք *տանգ (հմտ. *gon̥yi- > ծանգ): Ուրեմն հնդեվրոպական *d̥m̥u- ածականը հայերենում նախ տվել է տանա՛, ապա՝ տանա՛, որտեղ վերջին վանկի շեշտը պահպանվել է:

Գուցե բարդ բառերի տաճու բաղադրիչը նույնպես ածականական ծագում ունի: Այդ ավելի հավանական է տաճուցտաճու-ի համար, որը որպես մակբայ կարող էր ածականից կազմվել:

¹⁰ Գ. Զաճուկյան, Հայերենի հոլովման սխտեմը և նրա ծագումը, էջ 175:

¹¹ Իհարկե, եղել են նաև շեղումներ, որոնք դեռ բացատրության կարիք ունեն, տե՛ս Գ. Զաճուկյան, էջ 173, էջ 153—154:

¹² Է. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, հտ. 2, Եր., 1976, էջ 1410:

¹³ A. Meje, Введение в сравнительное изучение индоевропейских языков, Москва Ленинград, 1938, с. 272.

Լակ/լախ, լանկ/լանգ, լկնի

Հնդեվրոպական լեզուներում պահպանված *(s)l̥eg-/*(s)l̥og- արմատին հանգող բառերը կարելի է բաժանել երեք իմաստային դաշտերի՝ 1 անհաստատ, երբուն, ճոճող, 2 թույլ, մեղկ լինել, 3 ցոփ, անառակ, անպատկառ: Այս արմատից ծագող հայերեն բառերի համար նույնպես կարելի է կատարել այսպիսի բաժանում:

Հ. Աճառյանը հնդեվրոպական արմատի *(s)l̥og- տարբերակին է հանգեցնում բարբառային լակ բժույլ, փշացած ձու բառը և պատահական է համարում պարսկերեն լաչ բառի ձևափոխության համապատասխանությունը, քանի որ փոխառության դեպքում կունենայինք լազ և ոչ՝ լակ¹⁴, Գ. Զահուկյանը այս արմատի տարբեր աճականներով բաղադրված ձևերից է բը-խեցնում բարբառային մի շարք բառեր՝ լակվորթել, լկուվել, լկտվել շփանալ, լրբանալ, երես առնել, լակաչ «հին՝ մաշված, պատառոտված կոշիկ. շատախոս» և այլն¹⁵:

Պարզ լակ արմատը և -ն աճականով բաղադրված լակն- հիմքը գտնում ենք նաև հետևյալ բարդություններում. լակ-լակ (խոսել) «դատարկ, անիմաստ (խոսել)» (Ղրբ.), լկոռեալ «դատարկ, անմիտ խոսքեր, վայրահաշուություն» (Թբ.):

Բարբառներում լակ արմատին մոտ իմաստներ է արտահայտում նաև լախ արմատը՝ լախ բժույլ» (Ղրբ., Եմ.), «խիստ թույլ եփած, կիսահում ձու» (Ղրբ.), «հազը վրան քիչ մը նստելով՝ փճացած (հավկիթ)» (Երևան, Վն.), «անցած, շատ հասունանալիս ետք փճացած (ձմերուկ)» (Նբ., Սբ., Վն., Տփ.), «չարդված, փշրված» (Վն.), լախլախ «խախտ, թույլ» (Վն.), լախլախ անել «հիվանդի պես թույլ թույլ պտտիլ» (Ղրբ.), լախացնել բժույլացնել» (Եմ.), և այլն:

Լախ արմատի հնչյունափոխված լխ- տարբերակով և զանազան աճականներով ձևեր են բարբառային հետևյալ բառերը՝ լխլխալ «խախտ կամ թույլ ըլլալիս շարժիլ» (Ղրբ., Մշ., Պլ.), լխլխացնել, «չարժել, ցնցել» (Ղրբ., Եմ.), լխլխալ «ամանի մեջ հեղուկը շարժելով վեր վեր ցատկել, ձիու վրա կամ կառքի մեջ նստողին վեր վեր ցատկելը ցնցումներին են» (Եր., Ղրբ., Պլ., Վն.), «ծանր քայլի տատանվելով երկու կողմ» (Տփ.), լխլխացնել «երեքցնել, շարժել» (Ախց.), լխլխտել «կտրտել, շարժ ու փշուր անել» (Վն.), լխլխցնել «միևնույն խոսքը կրկնել և կրկնել» (Ախց.), լխոռեալ «դատարկ, անմիտ խոսքեր, վայրահաշուություն» (Ղրբ.) և այլն:

Լախ արմատն անմիջապես հնդեվրոպական *(s)l̥og- արմատին չի հանգում և լակ-ից բը-խող տարբերակ չէ, որովհետև հայերենի համար կիխ հերթագայությունը սովորական չէ: Հ. Աճառյանն այս արմատը համարում է փոխառություն վերը նշված պարսկերեն լաչ-ից¹⁶:

Սակայն պարսկերենն ունի համապատասխան իմաստով մեկ այլ արմատ ևս՝ lach- (հմմտ. lacht բժույլ, ճլորած), lachlach «եհհարաժվուն, հյուծված»): Հետևաբար հայերեն լախ-ը կարող էր գալ և պարսկերեն lach- արմատից:

Պետք է նշել, որ լախ-ը հայերեն բարբառներում շատ մեծ տարածում ունի և չափազանց պրոդուկտիվ արմատ է, որի համար քիչ դեր խաղացած չի լինի այդ արմատի բնաձայնական հատկանիշը՝ որևէ իրի կամ հեղուկի շարժվելու, ցնցվելու ժամանակ արձակված ձայնի հնչյունական արտահայտությունը: Նկատելի է նաև, որ այդ արմատով կազմված հայերեն բառերը մեծ մասամբ պարսկերենում ձևափոխության ճիշտ համապատասխանություններ չունեն: Ուրման, եթե այն իրոք իրանական փոխառություն է, այնուամենայնիվ հայերենում ինքնուրույն զարգացում է ապրել:

Բնաձայնությունն ակնհայտ է նաև լակ արմատում, որն, ի դեպ, հնարավոր է, այդ արմատին հատուկ է եղել դեռ հնդեվրոպական լեզվաընդհանրության շրջանում, քանի որ հնդեվրոպական լեզուների համապատասխան բառերը և ունեն բնաձայնական երանգ (հմմտ. չվիգ. slōka բժույլ կախել, հուծ. լաչլաչա «դանդաղել, տատանվել», լատին. laxus, հին իուլ. lacc բժույլ» և այլն)¹⁷:

Բարբառներում լակ և լախ արմատների կապի գիտակցումը, անկախ նրանց ծագումից, անժխտելի է, քանի որ հաճախ դրանցով ստեղծված բառերը նույնանում են (հմմտ. լկոռեալ-

¹⁴ Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մաս 1, Եր., 1940, էջ 120:

¹⁵ ՏԻՆ Գ. Բ. Զահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Եր., 1972, էջ 294, 296, 307, 328, 329: Բառերի այս շարքի մեջ նշվող լախաբա «անամոթ աղչիկ» (Վն.) բառը կարծում ենք փոխառված է պարսկերենից. հմմտ. պարսկ. lakhate «անառակ, փողոցային կին»:

¹⁶ Հր. Աճառյան, Հայերեն գավառական բառարան, էջ 407:

¹⁷ J. Pokorny, Indogermantisches etymologisches Wörterbuch, s. 959.

հաշ—լխահաշ, լիլկալ—լխլխալ և այլն): «Թուլլ, անհաստատ, շարժող» իմաստներով այս արմատները նույնանալով՝ դարձել են հնչյունային տարբերակներ:

Լաի արմատին ձևով և իմաստով մոտենում է նաև բարբառային լանկ/լանգ հիմքը. լանկու—լանկուս եբրկու կողմ երբերալով և տատանվելով» (Ղբբ.), լանգ տալ «դարիվ—դարիվ տալ, վեռվեռել» (Թբ.), լնգլնգալ, լնգլլանգու տալ «օրորվել, ճոճվել, երբրալ, տատանվել» (Ղբբ.), լնկալ «մեկ ոտքով կազալ» (Վն.) և այլն: Այս բառերում նույնպես առկա է բնաձայնութունը:

Լանկ/լանգ հիմքին պարսկերենում համապատասխանում են lang «կաղ» և վերը նշված laq «երկրացող, սասանվող, ճոճվող, լխլխկացող», որը «թուլլ, փշացած ձու» իմաստով նույնանում է հայերեն լաի բառին: Թեպետ լաչ-ն իր իմաստներով հայերեն բառերի հետ մտնում է նույն իմաստային դաշտի մեջ, սակայն ձևով տարբերվում է: Հայերեն բառահիմքը կարող էր գալ lang բառից, ապա ստանալ իմաստային զարգացում: Բայց այն կարող էր ծագել նաև հնդկիրուպական արմատի *n- միջածանցով *(s)lǝng ձևից, քանի որ հնդկիրուպական մյուս լեզուները նույնպես ունեն այդ նախածանցի հանգող բառեր՝ հին հնդկ. langa «կաղ», շվեդ. slinka «ոչ ամուր նստել, երերալ, դողալ», հուն. λαγγάω «տատանվել, դանդաղել», լատին. languēd, -ēre «թուլլ լինել»¹⁸: Այս դեպքում *(s)lǝng- ձևը հայերենում կտար լանկ, որը որոշ բարբառներում ն-ի մոտ կ-ի ձայնեղացմամբ դարձել է գ (հմմտ. ընկեր > (ն)ընգեր, ունկն > ունգ(ն), օնգեր.) նկ > նգ անցում նկատվում է նաև հայոց լեզվի զարգացման ավելի վաղ շրջանում:

Ինչպես տեսնում ենք, հնդկիրուպական լեզուների *(s)lǝg-/*(s)lǝg- արմատին հանգող բառերն իրենց ձևաիմաստային համապատասխանություններն ունեն հայերենում: Սակայն հայերեն բառերը մեծ չափով մոտենում են իրանականին: Դրանք հաճախ չեն նույնանում, որ հիմք է տալիս այդ բառերը ուշ շրջանի փոխառություններ չհամարելու, բայց միմյանցից կրած ազդեցությունը, հատկապես բովանդակության պլանում, անժխտելի է (հմմտ. պարսկ. lāyilāyijāt «գատարկ, անիմաստ խոսակցություն», lāngidān «կազալ»): Հնարավոր է, որ այն սկսվել է հայ-հնդ-արիական տարածքում (հմմտ. վերը նշված հայերեն և հին հնդկերեն բառերի մերձավորությունը) և շարունակվել է հայ-իրանականում, ուր հայերենի համար ճառագայթող կենտրոն են եղել, հավանաբար, հնդ-արիական, ապա իրանական լեզուները:

Այս տեսակետից հետաքրքիր նյութ է մատուցում բարբառային լանգառ՝ լարախաղացի հավասարակշռությունը պահպանող ձող» (Երևան) բառը: Այն նման է պարսկերեն lāngār «1 խարխիս. 2 լարախաղացի հավասարակշռությունը պահող ձող. 3 կշիռ» բառին: Հասկանալի է, որ պարսկերեն բառը հայերենից չի փոխառվել, քանի որ այն բազմիմաստ է և ունի բազմազգած ձևեր (հմմտ. lāngārban «խարխիս վրա աշխատող ծովային»): Բայց լանգառ բառն էլ բացատրելի է հայերենի բառակազմական մակարդակում: Այն կարելի է ստուգաբանել որպես լանգ և առ բառերից կազմված բարդություն: Առ բազմազգիչը զուտ հայկական կազմություն ունի և նշանակում է «վերցնելը, առնելը»: Հետևաբար լանգառ նշանակում է «լանգը՝ տատանումը, առնելը, վերցնելը», այսինքն՝ «տատանումը, երերալ կանխող (ձող)» (իմաստի համար հմմտ. առաջը առնել «ինչ-որ բանի ընթացքը կասեցնել՝ կանխել», վախճ առնել «վախճ վերացնել», ցավճ առնել «ցցավճ վերացնել» կանխել) բարբառային արտահայտությունները): Ուրեմն հնարավոր է, որ հայերեն բառը կրել է պարսկերենի ազդեցությունը, բայց այն հայերենի հողի վրա կազմված ձև է:

Հայերեն լանգառ-ը պարսկերեն lāngār բառի պատճենումը չէ: Այստեղ պարսկերեն lāng-ը օգտագործված է իր երկրորդ իմաստով՝ «կանգնելը, համելը», որ երևում է նաև lāngār բառի մյուս նշանակություններից: Եթե հայերեն բառն իրոք կազմվել է պարսկերենի ազդեցությամբ, ապա այն, այսպես կոչված, հայացվել է՝ lāng-ը գիտակցվել է որպես լանգ (տատանում, երերում), որը տվյալ դեպքում կարող էր զուգորդվել առ (վերցնել, վերացնել) բառի հետ: Հնարավոր է նաև, որ հայերեն բառը կազմվել է պարսկերենից առկախ: Այդ դեպքում նրանց նմանությունը պատահական է:

Վերը նշված երրորդ իմաստային խմբի մեջ մտնող բառեր են մատենագրությամբ ավանդված լինիլ «լրբանալ, լարչիլ, համարձակիլ, լրբաբար հանդգնել», լինուրիս «լրբություն», որոնք ձևաիմաստային մերձավորություն են ցուցաբերում Գ. Զահուկյանի կողմից *(s)lǝg- արմատին հանգեցվող բարբառային համապատասխան բառերին:

2. Աճառյանը ճիշտ է, երբ մերժում է լինիլ բառը հուներենից (λαγγάω «զեղչիլ, լրբանալ») անմիջական փոխառություն համարելու փորձերը: Նա մերժում է նաև Վալդիի կողմից հայերեն բառը հին հնդկերեն lañjīkā «անառակ» բառի հետ որեէ կապի դիտումը, քանի որ «իրևա բնիկ կապաներն լնիլ, իրև փոխառել» լագնիլ¹⁹,

¹⁸ Տե՛ս նույն տեղում:

¹⁹ Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հտ. 2, էջ 280:

Պարզ է, որ ձ. Աճառյանը հին հնդկերեն բառի հնդեվրոպական լինելու դեպքում նրա համար ենթադրում է ետնալեզվային քմային բաղաձայնով նախաձև: Բայց արիական լեզուներում ոչ միշտ է կիսաշփական բաղաձայնը ծագում հնդեվրոպական ետնալեզվային քմային բաղաձայնից, քանի որ ետնալեզվային բաղաձայնների քմայնացում (առաջին շարքի նայնավորներից առաջ) այդ լեզուներում տեղի է ունեցել նաև ավելի ուշ՝ հնդեվրոպական լեզվաընդհանրության շրջանից հետո: Այնպես որ հայերեն և հին հնդկերեն բառերի նմանությունը կարող էր սկիզբ առնել հնդեվրոպական շրջանից:

Անկախ դրանից հայերեն լինիլ և հնդեվրոպական մյուս լեզուների համապատասխան բառերի ձևախմբային նմանությունը մեզ կարող է հիմք տալ այդ բառը ևս հանգեցնելու հրեդեվրոպական $^*(s)l̥eg-/*(s)l̥æg-$ արմատին, օրինակ՝ հուն. $\lambda\acute{\alpha}\gamma\upsilon\varsigma$ «վաճառոտ, ցանկասեր», շվեդ. $sl\ddot{a}k$ «թիֆեամիտ կիև»: Նրա համար պետք է կանխադրել արմատի երկար ձայնավորով տարբերակ՝ $^*(s)l̥\bar{e}g- > ^*l̥h̥$, որի շեշտադրակ ի հնչյունի սղումով կազմվել է լինիլ բայը:

Հնարավոր է, որ վերը նշված բարբառային լիստվել բառում նույնպես առկա է լինիլ-արմատը:

Ստուգաբանվող բառերի արմատը գտնում ենք նաև ոչ հնդեվրոպական՝ թյուրքական (հմմտ. թուրք. $lenk$ «կաղ») և սեմական (հմմտ. արաբ. $laqlaqa$ «թափահարել, ճոճել, ցնցել») լեզուներում, որոնցով կազմված բառերի և նրանց համապատասխանող իրանական կամ հնդեվրոպական այլ լեզուների բառերի նմանությունը ոչ միշտ կարելի է բացատրել ուշ շրջանի միմյանցից կատարած փոխառություններով: Այդ արմատի այսքան լայն տարածումը, հնարավոր է, պայմանավորված է նրա բնածայնական բնույթով: Բայց այդ տիպի արմատները նույնպես լեզուներում կարող են ունենալ մեկ ընդհանուր սկիզբ: Ուրեմն կարելի է ենթադրել, որ $^*(s)l̥\bar{e}g-/*(s)l̥æg-$ արմատը գալիս է, այսպես կոչված, նոստրատիկ լեզվաընդհանրության շրջանից²⁰:

М. А. АГАБЕКЯН. — Этимологические замечания. — Восходящее к индоевропейской чередующейся падежной основе *d̥əmu/ɯ армянское $տանու$ сохранилось не только в $տանուտէր$, но и в диалектных сложных словах $տանուցտանու$, $տանեցտանու$ («по семейному»).

$Տանու$ (близкий к семье, домашний) прилагательное, по всей вероятности, состоит из корня *d̥əm- и суффикса *-u- (*d̥əm-u-), образующего прилагательные в индоевропейский период.

Слово $լկկիլ$ (наглеть), зафиксированное литературной традицией, восходит к индоевропейскому корню $^*(s)l̥\bar{e}g-$ (качаться, быть слабым, блудный).

Из варианта этого же корня $^*(s)lang-$ со слабой огласовкой и инфиксом *-n- исходит диалектная основа $լանկ/լանք$ (качаться).

²⁰ В. М. Иллич-Свитыч, Опыт сравнения ностратических языков (Москва, 1971—1976) գրքում այդպիսի արմատ չի առանձնացվում: